


1662-1668

17 1234

---

4-64













783

172





Ն Ո Ր  
ՅԱՅՏԱԳԻՐ—ԾՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ

ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ ԽԱՐԲԵՐԴԻ

(1910 ՄԱՅԻՍ 25)

ԴԻԻԱՆ ՈՒՍՈՒՄՆ. ԽՈՐՀՐԴՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱԶ. ՀԱՅՈՑ, ՄԷԶԻՐԷ



Կ. ՊՈԼԻՍ  
ԳՐԱՏՈՐՆ Թ. ԳԵԼԵՃԵԱՆ

—  
1911



373

Ն Ո Ր

ՅԱՅՏԱԳԻՐ—ԾՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ

ԵՐԿՍԵՆԻ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ ԽԱՐԲԵՐԴԻ

(1910 ՄԱՅԻՍ 25)

ԴԻԻԱՆ ՈՒՍՈՒՄՆ. ԽՈՐՀՐԴՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋ. ՀԱՅՈՑ, ՄԷՋԻՐԷ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԻՈՍԵԱՆ

—  
1911

9070 W

6477-57

# ԱՆՅԵՏԱԶԳԵԼԻ ԱՅԺՄԵՈՒԹԻՒՆՆԵՐ

Ե Ի

## ՍՏԻՊՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ



**ՏԵՂԱԿԱՆ** հայ դպրոցները աւուր իրականութիւններուն ստիպող պահանջին համաձայն վարել կարեւրացնելու համար, բանաւոր էր առլ անոնց նախապէս այնպիսի ծրագիր մը, որ նախնական լուրջ կրթութեան մը ատաղձներուն հետ. տեղ տեղ «ըստ հարկի և յարմարութեան» պարտադրէր նաև բարձրագոյն ուսմանց մշակութեան համար ալ որոշ պայմաններ և սահմանումներ:

Այս նպատակով Խորհուրդս իրեն հետ մէկ քանի ծանօթ ուսուցիչներ<sup>(\*)</sup> ալ օժանդակ առնելով խնամքը ունեցաւ պատրաստել ներկայ յայտագիր-ծրագիրը, ինչ որ կը պակսէր մինչեւ հիմա, կամ հոս հոն եղած ու գործադրուածներն ալ ժամանակայարմար գոհացնող պահանջներ չէին:

Ու որպէս զի սա տեսակ ձեռնարկ մը իր նպատակին ծառայող բաւարար ամբողջ մը ըտուի և գործադրուի, աշխատեցանք նոյն ատեն որ գործնական փորձառութեան

---

(\*) Խորհուրդիս և իր օժանդակ մասնախումբին պատրաստած այս գործը գնահատուած է նոյնպէս Եփրատ Գողթնի յարգելի բրօքէսօրներէն Ն. Թէնէքէճեան, Յ. Պուճիգանեան, Մ. Որբերեան էֆէնտիներէն: Վերջերս նաև Կարնոյ շրջանակներուն Միացեալ Բնկերութեան յարգելի քննիչէն՝ Մինասեան էֆէնտի կողմէ, որ երկու շաբաթ առաջ Խորհրդոյ այցելած էր:



տուն տուած յարմարութիւններու հետ հայ և օտար կարգ մը յայտնի դպրոցներու ծրագիրներէն ալ օգտուիլ գիտնանք ու այս կերպով տանք մեր դպրոցներուն այն տեսակ ձեւ ու կազմ մը , որ անոնք ալ եւս ազատելէ յետոյ անհատական միամիտ նախասիրութեան ու մութ քմայքներու ստեղծած դժուարութիւններէն , կարող ըլլան միօրինակ ուղղութեամբ և ընթացքով ու միշտ ի հարկէ խնայուած ժամանակի մը մէջ ստոյգ հանգրուաններ ողջունել :

Բայց որովհետեւ միշտ դիտուած է որ դպրոցական ծրագիր մը ինչքան ալ լուրջ ու չրջահայեաց խնամքով գծուած ըլլայ , դատապարտուած է չարժեկ աւելի քան մի անիրմատ պիտակ , հետեւանքովը տեղային կամ հոգաբարձուական անհարկի ու յաճախ անդէպ միջամտութիւններու :

Խորհուրդս հետեւաբար սա տեսակ անտեղութիւններու ալ կարելիօրէն առաջքն առնելու համար , որոչեց որ ասկէ վերջը դէպի հայ դպրոցները Այցելու Քննիչներու պարբերական առաքումով մը , տարին մէկ քանի անգամ , ինք ուղղակի հսկէ սա յայտադիր-ծրագրին գործարութեան հետ նաև ամբողջ դպրոցներու կազմին :

Այցելու քննիչ մը առայժմ պէտք եղած ատեն Խորհուրդս կ'առնէ իր մէջէն կամ գուրտէն՝ յարմարագոյնին ընտրութիւնով , ու ան՝ որպէս վստահելի միջնորդ մը Ուսում . Խորհուրդի ու դպրոցներուն միջև , պիտի կատարէ իր գործը յետագայ մեր ժ. յօդուածին համաձայն :



## ՆԵՐՔԻՆ ՇՐԱՀԱՆԳՆԵՐ ՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ

### Ա.

Մեր դպրոցները երկու դասընթացք ունին՝ Ա. Միջնակարգ և Բ. բարձրագոյն: Մանկապարտէզի երկու տարիները դուրս ձգելով:

Նախապատրաստական Ա. Տարրական՝ Ա. և Բ. Միջին՝ Ա. և Բ. Բարձրագոյն՝ Ա. և Բ. տարիներու հօթամեայ շրջանը կը կազմէ Միջնակարգ կրթութիւնը՝ որ պարտաւորիչ է ամէն մէկ թաղի և գիւղի: Իսկ լրացուցիչ Ա. և Բ. և երկրորդական Ա. և Բ տարիներու քառամեայ շրջանը կը կազմէ բարձրագոյն դասընթացքը կամ երկրորդական կրթութիւնը: Խարբերակ(\*) և Մէզիբէի վարժարանները պիտի ունենան բոլոր աս դասարանները:

Աղջկանց վարժարանի ընթացքը իննամեայ շրջան մըն է, որու համեմատ պէտք է ունենայ Միջնակարգ հօթը և լրացուցիչ երկու դասարանները:

1. Դպրոցի բացում եւ սեւողութիւն. — Դպրոցները պէտք է բացուին Օգոստոս 25ին (Ամիսներու թիւերը ըստ թրքաց հասկնալու է): Դպրոցական տարին երկու շրջանով պիտի բոլորուի. Ա. շրջանը Օգոստոս 25էն մինչև Գոնուար 1, չորս ամսուայ շրջան մըն է. իսկ Բ. շրջանը Գոնուար 10էն մինչև Գուլիս՝ թարգմանչաց Սահակայ և Մեսրոպայ տօնին օրը: Վեցամսեայ շրջան մը (երկրորդ շրջանը կը կիսուի Զատիկի 12 օրուան արձակուրդով մը):

---

(\*) Ս. Յակոբի դպրոցը, որուն Վարիչ-Տնօրէնն է Թշկասիւնցին, ունի արդէն յիշուած դասարանները: Այս դպրոցը Տնօրէնին հետ կը պաշտօնավարեն ուժը ուրիշ կարող ուսուցիչներ — Տ. Վ. քնյ. Ասլանեան, Մ. Ժամկոչեան, Խ. Քաչիկ, Տորթ. Մէլիք Կարապետ, Լուծֆի էֆէնտի, Յ. Գազանեան, Ս. Վէլէկ, Վ. Մամիկոն ևլն:

2. Արձակուրդ, պսոյս եւ մեղօրեք (holy-days) .  
— Գպրոցները տեղական պահանջներու համաձայն ունին  
երեք մեծ վազանս :

Ա. Ամալերջի՝ Յուլիսէն (Թարգմանչաց Սահակայ եւ  
Մեսրոպայ տօնէն) մինչև Օգոստոսի 25ը :

Բ. Ս. Ծնունդի՝ որ կ'սկսի Յունուար 1էն կը վերջա-  
նայ Յունուար 10ին :

Գ. Զատիկի՝ որ Աւագ Հինգշաբթիէն սկսելով կը  
տևէ 12 օր : (Գիւղերը տեղական պահանջի բերումով,  
կրնան Ծնունդի եւ Զատիկի արձակուրդը կարճեցնել) :

Ասկէ զատ, գպրոցները ամիսը կամ երկու ամիսը  
անդամ մը կը թոյլատրուին ուսանողական պտոյաներ  
կատարել յարմար գետններու վրայ, եւ կամ այցելութիւն-  
ներ մօտակայ գիւղերը ու գիւղերէն դէպի քաղաքը . ընտ-  
պատմական, աշխարհագրական, գիւղատնտեսական, իրա-  
գիտական եւ երկրաբանական դասերու եւ կամ ապրող  
ընակչութեան կացքին ու բարքերուն ծանօթացման հա-  
մար : Սա տեսակ պարագայի մը, ուսուցիչը կրնայ գիտ-  
նալ թէ՛ ո՞ր կարգերը պէտք է պտօցնել (երբ այս պտոյան  
ու խաղերը օրացոյցին խաչանիշուած տօնական օրերուն  
հանդիպին, նախընտրելի է պտոյտ եւ խաղ այդ օրերուն  
յարմարցնել) :

3. Տօնական կամ մեղօրեք . — Ազգային գպրոց  
մը փակ պէտք է մնայ հետեւեալ տօներուն : Սրբոց Առա-  
քելոց եւ Առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի եւ Բար-  
դուղիմէոսի, Վարդանանց զօրավարաց, Համբարձումն  
Քրիստոսի, Ս. Գրիգոր Լուսաւորչի Ելն ի վիրապէն . (վե-  
րահաստատումն քրիստոնէութեան ի Հայաստան) եւ Սրբոց  
Թարգմանչացն Սահակայ եւ Մեսրոպայ տօներուն ու Վեհ.  
Կայսեր գահակալութեան օրը :

Եթէ տեղական սովորութիւնը տիրող է՝ Մեծ Բարե-  
կենդանի առթիւ ալ 2—3 օր արձակուրդ կրնայ թոյլադ-  
րելի ըլլալ :



Բ.

Դպրոց եւ իւր վերաբերեալները . — 1. Շեկնք . — Դպրոցի շէնքը կարելի եղածին չափ նպատակայարմար դիրքի մը վրայ ու առողջապահիկ պայմաններու մէջ պահուելու է — օդասուն , լուսաւոր , երկյարկանի , տախտակամած ու յարմար բաժանուններով : Խաղարանը ընդարձակ ու աւազով յատակուած :

2. Դպրոցի վերաբացումէն առաջ՝ ամէն վարժարան վերանորոգուած եւ հականիսուած ըլլալու է : Ամիսը անգամ մը լուացուելու է տախտակամածն ու բոլոր այս կարգիները :

3. Ջանալու է որ գրասեղաններ յատկացուին բարձրագոյն կարգերու հասակաւոր աշակերտներուն , իսկ պզտիկ կարգերու առջեւը ցած սեղանիկներ : Դասարաններուն մէջ ուսուցիչին համար սեղան եւ աթոռ , իսկ աշակերտներու համար ալ յատուկ նստարաններ :

4. Ամէն դասարան ունենալու է սեւ պատ , կրնայ գործածուիլ նաև շարժական սև տախտակ ալ :

5. Հայթայթել Աշխարհագրութեան եւ Պատմութեան դասերու յատուկ համատարած Աշխարհացոյցներ ու Մասնաքարտէսներ : Ունենալ նաև գունաւոր քարտէսներ՝ իրազխտական , բնապատմական , բնազխտական եւ այլն գիտութիւններու գործնական դասաւանդումին համար , երբ մանաւանդ գործիք եւ առարկաներ անմատչելի կը մնան :

6. Վարժարան մը կրնայ ունենալ յարմար պահատեղի մը , ուր գիւղացի կամ քաղաքացի աշակերտներ կարող ըլլան իրենց պտոյաներու ատեն հաւաքածները դետեղել : Օրինակ . բուսեղէնի , քարի ու հոգի տեսակներ , հացահատիկներ , սերմեր , զանազան ծառերու ճիւղեր , երկրաբանական մնացորդներ , արհեստական եւ կամ երկրագործական գործիքներու նմոյշներ , խնցեղէններ , լեցուած թռչուններ եւ այլն . որոնք պիտի ծառայեն բնապատմու-

թեան, իրագիտութեան և աշխարհագրութեան դասերուն :

7. Ամէն դպրոց պարտի ունենալ իր գրադարանը, որ պարունակէ աշակերտներու զարգացման աստիճանին պատասխանող բարոյացուցիչ և օգտակար գիրքեր, կենսագրական պրօշիւրներ, հանդէսներ և տետրակներ և այլն :

Դ.

Դպրոցի աշխատութեան տեսողութիւն եւ ժամանակի բաժանում. — 1. Վարժարանները ամէն եղանակի մէջ անհրաժեշտօրէն պիտի ունենան օրական 8 ժամի տեւողութիւն, 6 ժամը ուսուցումի և երկու ժամն ալ դադարի յատկացուած : Մանկապարտէզներու աշխատութիւնը 4 ժամ միայն :

2. Ամէն դաս առնուազն  $3/4$  ժամու տեւողութիւն ունենալու է, 2 ժամն ալ դասամիջոցի, ճաշամիջոցի և սերտողութեան յատկացուած :

3. Կը յանձնարարուի որ դպրոցները եւրոպական ժամով ընթանան, ասով ձմեռուան ու ամառուան եղանակային անպատեհութիւնները կը դարձանուին ու դպրոցներու մէջ միօրինակութիւն կը տիրէ : Դպրոցը սկսիլ՝ առտուան ժամը  $8^{1/2}$  (Ը. Ե.) և վերջացնել  $4^{1/2}$ ին (Ը. Ե.) օրական երկու դասամիջոց և մէկ ճաշամիջոց բաւական կ'ըլլան աշակերտներու հանգստին համար :

4. Միջնակարգ վարժարաններու մէջ կարգերու համաձայն օրական 4—6, իսկ բարձրագոյն վարժարաններու մէջ 5—7 դաս աւանդել ամէն մէկ կարգի : Պարապ պահերու՝ աշակերտները սերտողութեամբ անցնելու են : Իրիկուան վերջապահները յատկացուելու են Գծագրութեան, Երաժիշտութեան, Չեռագործութեան, Գեղապրութեան և այլն դասերու օրընդմէջ :

5. Կը յանձնարարուի որ Սեպտ. Հոկտ. Մարտ Ապրիլ և Մայիս ամիսներուն ժամը  $8^{1/2}$ էն առաջ՝ 1— $1^{1/2}$  ժամ սերտողութեան յատկացուի :



Գ.

Դասացոյց-ժամանակացոյց եւ պարսացոյց . — 1. Ամէն դպրոցի ուսուցչութիւն տարուան սկիզբէն պատրաստելու է բոլոր կարգերուն վերաբերող կանոնաւոր դասացոյց-ժամանակացոյցը , ուր նշանակուած ըլլան կարգերուն անունները առանձինն , անոնց օրական ու շաբաթական դասերը , դասերուն , դասամիջոցներուն ու ճաշամիջոցի տեսողութիւնը եւ դասաւանդող ուսուցիչին անունը ամէն դասի հետ :

2. Պարտացոյցը պիտի պարունակէ այն բոլոր դպրոցական պարտքերն ու օրէնքները , որոնք ցուցուած են յետագայ Զ. հաստուածին մէջ եւ ինչ որ նոյն ատեն կառավարիչ կամ դատտիրարակ ուսուցիչը թելադրելու պէտք կ'զգայ :

Ե.

Ընդունելութեան պայմաններ . — 1. Մանկապարտէզ ընդունուելիք աշակերտի մը տարիքը՝ 4—5 , իսկ նախապատրաստական կարգը ընդունուողի մը կարգը ընդունուողի մը համար ալ 6—7ն է յարմարը :

2. Ամէն աշակերտ մուտքի քննութենէ անցընելէն վերջ կը տեղաւորուի իր կարգին մէջ : Առանց մուտքի տոմսակի , աշակերտ մը պահելու չէ դպրոցին մէջ :

3. Ծանր յանցանքով մը ու է վարժարանէ վտարուած սոցայ չընդունուիլը ազգային ու է մէկ վարժարանի մէջ :

4. Տարախոխիկ հիւանդութեան մը ենթակայ աշակերտը կը հեռացուի դպրոցէն մինչեւ որ իր կատարեալ ապաքինումը հաստատող վկայաթուղթ մը ներկայացնէ տեղին բժիշկէն ստորագրուած :

5. Մասնաւոր այցելու բժիշկ մը պարբերաբար պիտի ուշադրութեան ու քննութեան ենթարկէ ուսուցիչներու եւ աշակերտներու առողջական վիճակը :

Զ.

Աւակերտին դպրոցական պարսաւորութիւններ . — Ա. Կարգապահութիւն . — Դաստիարակութեան այն ճշմարիտ հայեցակէտով թէ՛ մանուկը անկազմ՝ նկարագիր մըն է դեռ՝ երբ կը ներկայանայ դպրոց , թէ՛ ան ամէնէն աւելի ենթակայ է ընտանիքի և շրջավայրի ազդեցութիւններու , հետեւապէս դպրոցը ամէնէն աւելի կարելի խնամքը ինք պէտք է ստանձնէ որ տղան ազատ պահուելով այդ յոռի հոսանքներէն , նա նոյն ատեն անհատական , ազգային և ընկերական լաւագոյն գաղափարներու և սովորութիւններու դաւանողն ու կիրարկողը հանդիսանայ :

Այս նպատակին համար ահա աշակերտը շարունակական կարգապահութեան (discipline) և բարոյական մթնոլորտի մը մէջ պահելու է :

Կարգապահական օրէնքներն ու միջոցները , իրենց բնութեան համաձայն , գիտակցական ու միջն իսկ երբեմն ալ մեքենական ճշգրտութեամբ գործադրուելու են :

Փորձառութիւնն ու պարագաները , աս ու ան կանոնին գոյութիւն և իրաւունք տալու են : Ամէն կարգապահական օրէնք բովանդակ ուսանողութեան օգտին շահին բմբռնումովը դրուելու է : Ամէն աշակերտ պէտք է ճանչնայ դպրոցը իբր սիրելի և պատկառելի վայր մը : Զգուշանալ քմածին և անգործադրելի կանոնադրութիւններէ :

Մենք հետեւեալ յաճախազէպ պարագաներուն վրայ պիտի դարձնենք ուսուցիչներու արթուն ուշադրութիւնը :

1. Աշակերտը կոկիկ և մաքուր դրսերեւոյթ մը պէտք է ունենայ , հոգ տանի մարմնական մաքրութեան , լուացումի , պարբերական լողանքի և ճաշակաւոր հագուելակերպի :

2. Քաղաքավար նիստ ու կաց , պատշաճ վերաբե-

բում և խօսակցութիւն հանդէպ իր ուսուցիչներուն , ընկերներուն և բոլոր զինք չըջապատողներուն :

3. Մաքուր պահելու է նաև իր դպրոցական առարկաները :

4. Հոգածու գտնուելու է դպրոցապատկան կահ կարասիներու և իրեղէններու համար , (չպատռել , չտաշել , չաղտոտել , մեղան չթափել , չգրել կամ չգծել պատի , գրասեղանի , գրան , աշխարհացոյցի և այլնի վրայ) :

5. Աղտեղութիւններ չի ձգել դպրոցին ներսն ու դուրսը :

6. Ձիւրացնել բնաւ դասակից ընկերի մը վերաբերով ո և է իր :

7. Ծշգապահօրէն դպրոց յաճախել և դասերուն ներկայ գտնուիլ :

8. Անժամանակ և առանց արտօնութեան չհեռանալ դպրոցէն , դասէն ու դասամիջոցէն չբացակայիլ :

9. Դպրոցին մէջ աղմկալի խօսիլ , խնդալ , երթեւեկել , անկանոն ճաշել անպէտ իրերով գրադուիլ կամ պարսպ նստիլը արգիլուելու են :

10. Անբանաւոր պատճառներով բացակայութիւններ չպատրուակել , հիւանդութեան , մահուան և ուրիշ անձնական ու ընտանեկան խիստ հարկեցուցիչ պարագաներու տակ միայն հրաման առնել թոյլատրելի է , երբ անեցիներէն կ'ըլլայ իմացումը :

11. Կարգապահական միեւնոյն միջնոյրտը պէտք է տիրէ դասարաններու ինչպէս նաև միզանցքներու մէջ :

12. Դասամիջոցներու ատեն անձոռնի և գռեհիկ խաղեր խաղալէ զգուշացնելու է , այդ պարագաներուն ալ քաղաքավար վարմունքն ու անվնաս խաղերը կը յանձնարարուին :

13. Սիրցնել աշակերտին հայ կրօնն ու մայրենի եկեղեցին : Ամէն աշակերտ պարտաւոր է եկեղեցի յաճախել



գոնէ Շարաթ երեկոյնները , Կիրակի առաւօտ և տօնական օրերը մանաւանդ :

14. Աշակերտէ մը պարկեշտ ու բարոյականի տէր մէկու մը ընթացքն ու վարմունքը կը պահանջուի՝ դպրոցին մէջ ու անկէ դուրս ալ :

Բ. Ուսումնական . — Աշակերտը հաճելի եղանակով մը հետզհետէ գիտական աշխատութեան մը մղելու է : Դիտուած է որ առհասարակաց ծոյլ և աշխատութենէ խուսափող աշակերտներն են ամէնէն շատ անկարգներն ու օրինազանցները :

1. Հետեւապէս պարտաւոր է ամէն աշակերտ , առանց բացառութեան՝ մասնակցիլ ամէն դասաւանդութեան , բացառութիւնը միմսակ բժշկական վկայութեամբ ընդունելի է :

2. Ուսանող մը ունենալու է իրեն սեպհական դասագիրքը , տետրակը , գրիչը , կաղամարը , քանակը ու բոլոր ամբողջութիւնը դպրոցական պէտքերու :

3. Մշակել աշակերտին մէջ արժանապատուութեան զգացումը և քաջալերել թուրակամ և ինքնախտահութենէ զուրկ եղողները որ անկախօրէն դաս սորվելու վարժուին , գրաւոր կամ բերանացի քննութիւններու ատեն իրենց ընկերներէն ընդօրինակելու չի գիջանին :

4. Աշխատութեան և սերտողութեան միջապահները կանոնաւորապէս և յարմարապէս գործածելու վարժեցնել :

## Է.

Պատիժ՝ վարձատրութիւն . — Ո և է անկարգութիւն , անհատական կամ ընդհանուր հանգամանք ունեցող , իր տեւական չարիքը պիտի ունենայ անխուսափելիօրէն , եթէ յարմար պատիժի մը գործադրումը չըլլայ ատենին : Պատիժին բացարձակ բացակայութիւնը աշակերտը չիացումի կը տանի , որուն միակ պատասխանատուն թոյլ հոգի ,

երկչոտ և կամ անգիտակ ու այլահաճ ուսուցիչ մըն է յաճախ :

2. Սակայն պատիժով յանցանք մը դարմանել խընդիրին բացասական ու մէկ կողմն է միայն : Անոր ճշմարիտ դարմանումը կ'ըլլայ վարձատրութիւնը՝ աշխատասէր ու կարգապահ աշակերտներու համար : Ասով անոնք աւելի քաջալերուած կը շարունակեն իրենց այդ գնահատելի ընթացքը, ինչ որ միւս կողմէն բարի նախանձի մը սկիզբը կ'ըլլայ միւս ընկերակիցներուն : Այս վերջինները — ծոյլեր կամ յանցաւորներ — վարձատրութեան գնահատութեան հրապուրանքով անուղղակի շիտկուելու կ'ելլեն հետզհետէ, ու օր մըն ալ օրինակելի աշակերտներու խումբին մէջ կը մտնեն :

Ա. Պատիժներ անկարգապահ և օրինազանց աւակերտներու մասին. — (Ա.) Պատիժ մը անօրինակու և գործադրելու ատեն ուշադրութեան առնելու է 1. ենթակային տարիքն ու խառնուածքը : 2. գործուած յանցանքին ընդթեր, այսինքն՝ անհատական թէ ընդհանուր հանգամանք ունի : 3. գործուած յանցանքին շարժառիթը, այսինքն՝ անգիտակցաբար գործուած է թէ դիտումնաւոր լարուածքով : 4. գործուած յանցանքին յառաջ բերած շարիքները : 5. արուելիք պատիժին հետեւանքը եղող բարեբար կամ հակազգեցիկ տպաւորութիւնը :

(Բ.) Իսկ ամէն գործադրելի պատիժ իրեն նպատակ ունենալու է երկու տեսակէտ . 1. յանցաւորին ուղղուելը և 2. օրէնքին գործադրութիւնը կամ արդարութեան գոհացումը, որ աւելի ընդհանուրին օգտակարութեան պահանջն ունի իր մէջ :

(Գ.) Ամէն բարոյական կամ նիւթական պատիժի ընկերանալու է գուրգուրանք, կարեկցութիւն, խրատ և ներողամտութիւն դէպի յանցաւորը, առանց բնաւ վրէժխնդրական արտայայտութեան կամ վայրագ ցոյցերու :



1. Կանոնապահութեան ու է մէկ թերացումի պարագային (Գլ. Զ. Ա. 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12,) առաջին առիթով զգուշացում, խրատ, իսկ կրկնութեան պարագային հրապարակային յանդիմանանք ու բարոյական պատիժ (դասէ, դասամիջոցէ զրկում, վարուց պակաս նօթ, սեւ տախտակի վրայ անունի ցուցադրում, մեկուսացնել զրասեղանէն կամ տեղէն, ոտքի կեցնել և այլն) :

2. Յանցանքներու շարունակութեան պարագային, հրապարակային ազգարարութիւն տեսուչի, տնօրէնի և կամ պաշտօնական մարմինի մը կողմէ, զբաւոր զեկուցում յանցաւորին ծնողաց, հրապարակային apology (ներողութիւն ինչրեկ) ընել տօլ :

3. Անսասան ու կամակորը պայմանաւոր կերպով հեռացնել զպրոցէն (մէկ շարաթէն մինչև մէկ ամիս) ու պայմանաւոր ընդունիլ :

4. Անուղղայ համարուածները կը հեռացուին ամբողջ շրջանի մը համար :

5. Այն աշակերտները որ գայթակղելի արարքներու մէջ կը գտնուին (Գլ. Զ. Ա. 6, 8, 13) այսինքն՝ կը ստեն գողութիւն կը փորձեն, թոյլ բարոյական մը կը մատնեն, կ'ըմբոստանան, անպատիւ ընկերակցութիւններու մէջ կը գտնուին, կարգերու մէջ վնասաբեր որոմներ կը ցաննեն և այլն. անոնք իսպառ կը վճատուին երբ զպրոցը այլեւս ինքզինք յուսահատ կ'զգայ զանոնք շիտկելու ջանքին մէջ : (Սրտաբտումը գործադրելի է միայն բարձրագոյն կարգի աշակերտներուն :) :

6. Փայտի գործածութիւնը սկզբունքով արդիւում է զպրոցներու մէջ :

7. Բնաւ չպատժել տկարամիտ աշակերտները, յաւէտ թեկադրել ու յուսադրել :

8. Ծոյլերը պատիժներու միջոցով գործունէութեան մղելու ջանալ :

Բ. Տնօրէնութիւններ ծոյլ եւ սկարամիս աւակերտներու մասին :

Ուսման աստիճանացոյց (note), դասերու գնահատման աստիճանը :

Ի. Ծոյլ և տկարամիտ աշակերտները չըջանի վախճանին կը ձգուին կարգէ, ուսուցիչներու նշանակած դասի բերանացի կամ գրաւոր քննութեանն նօթերու համաձայն հետեւեալ պարագաներուն տակ :

1. Առ հասարակ տարուան վախճանին կ'որոշուին կարգէ ձգուելիք աշակերտները և ըստ այնմ կ'ընդունուին յաջորդ չըջանին :

2. Ու է կարգընկէց աշակերտ կրկին յաջող քննութեան վերջ իր կարգին հետ կրնայ միանալ :

3. Մէկ կամ երկու դասի մէջ տկար եղողները Բ. չըջանին ազդարարութիւն կ'ընդունին, և կրկին քննութեան կը հրաւիրուին : Եթէ Բ. չըջանի վախճանին անյաջող դուրս գան նոյն դասերուն մէջ, անպայման կերպով կը ձգուին կարգերէն :

4. Ա. չըջանի վախճանին կարգէ կը ձգուին անյաջող աշակերտները սա պարագաներուն տակ : (Ա) Երբ իրենց դասերուն մէջ կէս առ կէս անյաջող են : (Բ) Երբ Ա. չըջանի միջոցին հիւանդութեամբ կամ երկար բացակայումներով մասնակցած չեն դասերուն : (Գ) Երբ առժամանակեայ հեռացումի պատիժով զրկուած են դասերէ երկար ատեն մը :

5. Բ. չըջանի վախճանին մէկէ աւելի դասի պակաս նօթ ունեցող աշակերտներու ազդարարութիւն կ'ըլլայ և պատահութիւն կը տրուի մեծ արձակուրդի առիթով, որ դպրոցի վերաբացումին կրկին քննութիւն տան : Բոլոր դասերուն մէջ յաջող նիշ աննկէն վերջն է որ իր կարգին հետ միանալ կը թոյլատրուի :

6. Շըջանաւարտող աշակերտի մը դասերուն և

քննութիւններուն միամիտայ նիշերու միջինը երբ 75էն վար է և կամ երկու դասի պակաս նօթ ունի վկայականէ կը դրկուի :

7. Տկարամտութեան պատճառով երկուքէ աւելի դասի պակաս նիշ ընդունող և ընդհանուր դասերու մէջ ալ միջակէ վար կարողութիւն ցուցնող աշակերտները անպայման կերպով կը ձգուին կարգէ , առանց նոր քննութեան ենթարկուելու :

8. Երբ աշակերտ մը 2 տարի միեւնոյն կարգին մէջ կը մնայ , իբր ուսման անընդունակ կը խրկուի դպրոցէն :

II. Աշակերտին ուսման աստիճանացոյցը կը կազմէ անոր դասի բերանացի կամ գրաւոր քննութեանց միացեալ նիշերու միջինը : Երբ 70էն վար ըլլայ , անյաջող կը նկատուի : 0—100 աստիճանով կը գնահատուին աշակերտներու դասի և վարուց չափանիշը , 0—60 անյաջող . 60—70 տկար . 70—80 միջակ . 80—90 լաւ և 90—100 լաւագոյն անուններով կ'որոշուին այդ աստիճանները :

III. Հետեւեալ կերպով կը գնահատուին դասերը :  
1. Ուսողութիւն , լեզուներ և գիտութիւն իրենց ճիւղերով , Պատմութիւն , Աշխարհագրութիւն , Իրագիտութիւն , Բնապատմական գիտութիւններ , Ընկերական գիտութիւններ , Կրօնագիտութիւն իր ճիւղերով Բ. աստիճանով՝ այսինքն 70—100 նօթերով անցանելի են :

2. Գծագրութիւն և դժամարգութիւն , գրավարժութիւն և գեղագրութիւն ու երաժիշտութիւն , աղջիկներու համար ձեւ , կար , ասեղնագործութիւն , Նիւսուածք և այլն 60—100 անցանելի կը նկատուին :

Հետեւապէս երբ աշակերտ մը ցուցուածին համաձայն դասին չափանիշ բոնուած նիշէն աւելի ընդունած է կարգը կը փոխէ : Իսկ երբ ընդհանուր դասերու միջինը 70է վար է , կարգէն ձգուելիք մըն է :

Գ. Վարձատրութիւն . — Կարգապահ և յառաջադէմ



աշակերտները պիտի վարձատրուին դպրոցին մէջ կամ հրապարակաւ :

1. Վարձատրութիւնները կ'ըլլան Ա. չրջանի վախճանին և կամ ամալերջերը :

2. Կը վարձատրուին բնդհանուր կերպով կարգապահ եղող և ամէն դասի մէջ յառաջդիմութիւն ցուցնող աշակերտները :

3. Վարձատրելի են նաև մասնական յաջողութիւններ (ծիրք կամ կարողութիւն) ցուցնող և պարագայական օրինակելի բարեմասնութիւն մը ներկայացնող աշակերտները :

4. Վարձատրութեան պարագային աշակերտը կը գնահատուի իր գասակիցներուն բաղդատութեամբ :

5. Ուսման և կամ վարք-բարքի մէջ 85էն վեր նօթ առնող աշակերտները միայն կը վարձատրուին :

6. Գնահատման աստիճանը երկուք է. 85—95 Բ. և 95—100 Ա. մրցանակ :

7. Վարձատրութիւն կ'ըլլան մրցելի նիւթերու և դասերու վրայ, որոնք նախապէս կ'որոշուին անհատներու պաշտօնական մարմիններու և ուսուցիչներու կողմէ, խոստացուած մրցանակներու համաձայն :

8. Ուսուցչական մարմինի կողմէ նշանակուած մասնաւոր անձեր կը գնահատեն մրցակցութիւնները, որոնց արդիւնքը մրցանակարաշխութեան հանդէսով կը ծանուցուի :

9. Մրցանակները կ'ըլլան տպուած «բարենիշ», պատուատոմս, դիրքեր, տետրակներ, դպրոցական իրեղէններ, դրամ և պատկերներ :

10. Ուսումնական Խորհուրդը այս նպատակով ամէն դպրոցի վարիչ-մարմինի պիտի յանձնարարէ որ մասնաւոր գումար մը նշանակէ իր դպրոցական պիւտձէին մէջ :

6472-57

11. Ուսումնական Խորհուրդը «Պատույ թուղթ» պիտի տայ բովանդակ դպրոցին մէջ ամէնէն յառաջագէմ և կարգապահ աշակերտին ընդհանրապէս . ու շրջանաւորատող կարգի մը առաջին աշակերտին մասնաւորապէս . ամալերջի ուսուցչական ժողովի կողմէն Խորհուրդիս զըրկուած վիճակացոյցին գնահատութեամբ :

## Բ.

ՔՆՆՈՒՔԻՆՆԵՐ գրաւոր եւ բերանացի . — 1. Ամէն դպրոց շրջանաւոր գրաւոր քննութիւններ պիտի կատարէ դասաւանդուած առարկաներու վրայ , դասին ուսուցիչին կողմանէ . հետեւապէս տարուան միջոցին երեք գրաւոր քննութիւններ կատարուելու են , մէկը՝ Ա . շրջանի վախճանին , միւսը՝ Բ . շրջանին՝ Զատակական օրերուն և Գ .ը ամալերջի առիթով :

2. Երբ դասազիրք մը կը լրանայ՝ ընդհանուր վերաքաղ մը ընելէ վերջ ձգելու է դայն՝ մասնական գրաւոր քննութիւնը կատարելով մէկտեղ :

3. Ամալերջերը բերանացի ամփոփ վերջիչում մը ընել տալ ամէն մէկ առարկայի , վեր առնելով խոշոր գծերով՝ գիրքէն է՛ն կարեւոր մասերը :

4. Միջնակարգ վարժարանի մը միայն բարձրագոյն Ա և Բ կարգերը , իսկ բարձրագոյն վարժարանի մը (high school) 6 կարգերն ալ ենթարկելի են գրաւոր քննութեան :

5. Ամալերջի առիթներով խոպառ արգիլուած է բերանացի հարցաքննութեանց զրութիւնը : Իպրոցը փակել դպրոցական գեղեցիկ ու հետաքրքրող հանդէսներով միայն :

6. Ամէն դպրոց ուսման և կարգապահութեան միամեայ վիճակացոյցը պիտի զրկէ Ուսումն . Խորհուրդին՝ ուր շրջանաւարտող կարգի աշակերտներուն անուններուն դէմ



առանձինն նշանակուած ըլլան անոնց միամիայ ուսման և կարգապահութեան նօթերուն միջինը և ընդհանուր միջինը :

7. Խորհուրդիս կողմէն ընտրուած ու զրկուած այցելու քննիչներ պիտի կրնան անձամբ լսել դասաւանդութիւնները և ուղղակի հարցումներով գաղափար կազմել աշակերտներու մտաւոր պաշարին և իւրացուցած դասին վրայ :

Թ.

Վկայականի եւ Մրցանակաբաշխութեան հանդէսներ. -- 1. Ամէն վարժարան տարուան յարմար տօնական մէկ օրին, կրնայ դպրոցական հանդէս մը տալ ի ներկայութեան ժողովուրդին, շահեկան ու պատշաճ հանդամանքով մը :

2. Վկայականաց բաշխման հանդէսը կը կատարուի ամառվերջերը, թարգմանչաց Ս. Սահակայ և Մեսրոպայ տօնին օրը, տեղին Առաջնորդին կամ անոր փոխանորդին և Ուսում. Խորհուրդի ներկայացուցիչներուն ներկայութեամբ :

3. Մրցանակաբաշխութեան հանդէսը յարմարապէս կրնայ միացուիլ վերոյիշեալ հանդէսին և կամ կատարուի առանձին օր մըն ալ, նոյն հանդէսէն առաջ (դպրոցի վարչութիւնը՝ այս պարագային իմացում պիտի ընէ Խորհուրդիս գրաւորապէս) :

Ժ.

Ուսուցչական ժողով. — Դպրոցները ունենալու են իրենց Ուսուցչական ժողովները գոնէ 15 օրը անգամ մը, Շաբաթ առաւօտ, դպրոցը բացուելէ առաջ, այս ժողովներուն նախագահողը կամ վարիչը կ'ըլլայ, որպէս առաջին հեղինակութիւն՝ դպրոցին անօրէնք միայն : Խորհուրդս ալ արդէն նոյն անօրէնքը կամ առաջին դասատուն կը

ճանչնայ պատասխանատու ներքին կազմին ու կանոնա-  
ւորութեան :

Ուսուցչական ժողովի խորհրդածութեան նիւթերը  
պիտի ըլլան :

1. Խորհիլ և միջոցներու կարելիութիւնը ապահովել  
աշակերտներու բարեկրթութեան ու խնայական զարգաց-  
ման նպատող պարագաներու :

2. Յաճախակի քննութեան առնել ծոյլ, տկարամիտ  
և կանոնազանց աշակերտներու վիճակը, և յարմարն ու  
օրինաւորը սնօրինել, աչքի առջև ունենալով ուսման և  
կարգապահութեան վիճակացոյցը :

3. Որոշել գրաւոր քննութիւններու, արձակուրդի,  
տօնական և պտոյտի օրերը, մասնահանգէսի, ամալներջի  
մրցանակաբաշխութեան, վկայականաց բաշխումի և  
դպրոցի վերաբացման ժամանակները ու ուրիշ այս կարգի  
պարագաներ :

4. Դպրոցի արտաքին ու ներքին մաքրութեան,  
նորոգութեան, յաւելուածքի, ներքին կահաւորման, ան-  
հրաժեշտ դպրոցական գործիքներու և առարկաներու պէտ-  
քը հայթայթելու ստիպողականութիւնը տեղեկացնելով  
դպրոցի վարչութեան, անկէ դժնայում ստանալ :

5. Դպրոցական կարեւոր կամ դժուար խնդիրներու  
և հարցերու կարգադրման մը պարագային, խորհրդակ-  
ցարար դիմել և կամ պատասխանել Գաւառ. Ուսում.  
Խորհուրդին :

Վ.Ս.

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ

Ուսումնական Խորհուրդս անոնք միայն կ'ընդունի և  
կը վաւերացնէ իբր ուսուցիչ՝ Ազգ. վարժարաններու մէջ,  
որ Ազգ. և կամ օտար երկրորդական վարժարանի մը  
վկայականը ունին և կամ Ուսում. Խորհուրդի միջոցով

տիրացած են ուսուցչական վկայականի՝ հարկ եղած քըն-  
նութիւններէն անցնելով :

Աշակերտներու վերաբերեալ հարկաւոր ցուցումներէն  
վերջ , քանի մը կարեւոր թեկադրութիւններ ալ կ'ուզենք  
ընել յարգելի ուսուցիչներուն և ուսուցչուհիներուն ու-  
սումնական և կարգապահական կրկին ուղղութեամբ ,  
որոնց մասին վստահ ենք որ բոլորովին անգիտակ չեն և  
սակայն այս վերջիններն ալ իրենց արժէքը ունին :

Ա. Կարգապահական . — Դպրոց մը երբ սրահական  
դրութեամբ կը կառավարուի , նշանակուած կառավարիչ  
ուսուցիչը կ'ստանձնէ կարգապահական կանոններու և  
օրէնքներու հսկողութեան ինչպէս նաև գործադրութեան  
պաշտօնը : Իսկ երբ դասարանական դրութեամբ կը կա-  
ռավարուի ան , դաստիարակ կամ պատասխանատու ու-  
սուցիչն է ստանձնողը : Ամէն կարեւոր ու ծանրակշիռ  
պարագայ ուսուցչական ժողովի խորհրդակցութեամբ կ'ո-  
րոշուի : Ամէն ուսուցչական ժողովի որոշման գործադիր  
անձը՝ կառավարիչը , Աւագ ուսուցիչը կամ Տնօրէնն է :  
Ուրիշ ո և է ուսուցիչ պէտք չէ միջամտող ըլլայ :

1. Կառավարիչ կամ դաստիարակ ուսուցիչ իր վար-  
ուելակերպին մէջ պէտք է դնէ քաղաքավարութիւն : Իր  
յանձնարարութեանց ու գործադրութիւններու մէջ ալ  
չըջահայեաց , թափանցող ու խոհեմ :

2. Պատժական տնօրէնութիւններու պահուն նաև  
ուղղամիտ , անաչառ և օրինապահ : Չ'անտեսել ո և է յան-  
ցանք , պաղարիւն ու ոչ ջղայնոտ վիճակով պատժել , և՛  
յարմար ժամանակին :

3. Յաճախ խրատ , գուրգուրանք , երբեմն ալ նե-  
րողամտութիւն միացնել պատիժին :

4. Պատիժի գործադրութեան մէջ նպատակ ունե-  
նալու է յանցաւորին ուղղուելը և դպրոցին մէջ՝ անոր  
յառաջ բերելիք բարերար ազդեցութիւնը :



5. Ամէն յանցանք հրապարակելու պէտք չի կայ և ոչ ալ ամէն յանցաւոր հրապարակաւ պատժելու՝ երբ գործուած յանցանքը հանրական բնոյթ չունի (ըստ այսմ, պատժող ուսուցիչին դատողութեան կը ձգուի առանձինն կամ հրապարակաւ պատժելու պարագան) :

6. Պահել ցուցակը անկարգապահ, անճշդապահ ու բացակայ աշակերտներու :

7. Արձանագրութիւնը ունենալ ուշադրաւ թերացում և յանցանք գործող տղայոց :

8. Դպրոցին մէջ պաշտօնավարող բոլոր միւս դասախօս ուսուցիչներն ալ նոյն կարգապահական կանոններու գործադրութեան համար նախանձախնդիր գտնուելուն : Իրենց անձին օրինակով յարգանք ներշնչել աշակերտաց դպրոցական օրէնքներու մասին և պաշտօնակցական համերաշխ ու բարեացակամ վերաբերում մէկ մէկու հետ, որպէս զի մէկ կողմէն զիւրանայ կառավարիչ ուսուցչին գործը և միւս կողմէն ալ աշակերտները հակընդդէմ նկարագրիրներու մէջ չի գտնուին :

9. Դպրոց և ուսուցիչ իրր հանրային հաստատութիւն, և պաշտօնեայ կը թելադրենք որ թաղային և կուսակցական խնդիրներէ, պայքարներէ հեռու մնան ու չի վտանգեն իրենց հեղինակութիւնը :

10. Կառավարիչ ուսուցիչը Աւագ կամ Տնօրէն ուսուցիչին գործակցութեամբ պիտի պահէ ընդհանուր աշակերտներու արձանագրութեան, ուսման, կարգապահութեան, ներկայութեան, վարքի-բարքի և այլնի արձանագրութիւններն ու նօթատեսարները :

Բ. Ուսումնական. — 1. Ամէն ուսուցիչ իր ատենին գասարան գտնուելու է :

2. Ո և է ուսուցիչ, իր աւանդած տարկային դասադիրքին հետ ուրիշ օգնական դիրքեր ալ պահելու է իր ձեռքին տակ անոնցմէ օգտուելու համար : Այս շատ կա-

րեւոր պէտքը հոգացողը դպրոցի վարչութիւնը (Թաղակ-  
նհամակալ) ըլլալու է, ուսուցիչն ալ գործածողը միայն,  
ցորչափ նոյն դպրոցին մէջ կը մնալ: Գիրքերը դպրոցի  
մատենագարանին անձեռնմխելի սեպհականութիւնը կ'ըլ-  
լան: Եւ ստիպողական է որ անձեռնը դպրոցի վարչու-  
թիւն ամէն տարի մասնաւոր դումար մըն ալ դպրոցի  
մատենագարանին համար տրամադրէ իր ընդհանուր  
պիւտճէին վրայ:

3. Ուսուցիչ մը նախապէս իր աւանդելիք դասը  
պատրաստելէ վերջը մանկու է դասարան:

4. Դասերը իրենց բնութեան համաձայն աւանդուե-  
լու են հասկնալի ու պարզ լեզուով: Զգուշանալու է  
բռնապրօսիկ, քնարեր ու մեքենական կերպերէ:

5. Բացատրութիւնները պարզէն լազազրեալ, ծա-  
նօթէն անձանօթը, մօտէն հեռու, առարկայականէն վե-  
րացեալին, ներկայէն անցեալին ու նիւթէն գաղափարին  
առաջնորդող տեղիքներով ըլլալու են:

6. Աշակերտին պատասխանները գնահատել նիշի  
որոշեալ աստիճաններով:

7. Աշակերտը մասնակից ընել դասին, լսել զայն  
համբերութեամբ և թեխադրական հարցումներով պատաս-  
խանը զիւրացնել:

8. Աշարջօրէն հսկել գրաւոր քննութիւններու ա-  
տեն, բնաւ պատեհութիւն չի տալ օրինակելու փորձու-  
թեան:

9. Ամէն գրաւոր պատասխանաթուղթ խղճմտօրէն  
աչքէ անցընելէ վերջ գնահատական աստիճաններով  
թուղթը աշակերտին դարձնել պէտք տեսնուած դիտ-  
դութիւններով:

10. Դասի պահերուն անձնական կամ դասին հետ  
կապ չունեցող գործերով, խօսակցութիւններով ժամաւա-  
ճառ չըլլալ:



11. Կրօնական, ընկերական և բնախօսական անմարսելի գաղափարներով աշակերտին միտքը չի կնճռոտել : Գասաւանդութիւն . — Գասաւանդութեան գալով սակէտերը կը յանձնարարենք :

1. Կրօնական դասը նախնական կարգերու համար սոսկ պատմական և կենսագրական տեղիքներու դէմքեր ըլլալու են՝ կրօնաբարոյական հանգամանք ունեցող : Իսկ բարձրագոյն կարգերու համար, կրօնի բուն ոգին, բարոյական կեանքի երեւոյթները, կրօնին ստացած վարպահման ու բարեշրջումի փուլերը, և ազգայնական կրօններու նկարագիրն ու ասոնց բազմապատկան արժէքը անկեղծ ու անկաշկանդ ոգիով : Գաղափարի աշակերտին մէջ կրօնի ընկերա-բարոյական և հոգեկան կեանքի մը առաջնորդող էական տարրի մը անհրաժեշտութիւնը, ճանչցնել Հայ եկեղեցին, սիրցնել հայ հաւատքը և պատկառանք ներշնչել :

2. Լեզուի դասին մէջ հոգ տանել առոյգ և ուղիղ արտասանութեան թելագրութեամբ շարադրելու ընտելացնել, գրաւոր և բերանացի ուղղագրութեան փորձարկել : Օրինակներով բառերու և նախադասութեանց կազմութեանը ծանօթացնել, բառերու յարաբերական և տեղական իմաստը բացատրել գործածական ոճերով : Գրաւոր կամ բերանացի ամիտփումը ընել տալ դասին, հատուածին բուն ոգիին ու նպատակին թափանցել տալ . հարցումներու միջոցով խօսակցութեան վարժեցնել, անկախ խորհելակերպ մշակել, գրուածներու տեսակը ծանօթացնել, այլազան նիւթերու և ուսումնասիրութիւններու միջոցաւ խմբագրութեան վարժեցնել, քերականական ուսումը իբր գործիք ու միջոց գործածել՝ ուղիղ, տրամաբանական, վայելուչ և գործածական լեզուի մը կիրարկումին համար :

3. Պատմութեան դասը աւանդել հատկապի և հրապուրիչ եզանակով, չի ծանրանալ թիւի ու անունի վրայ : Հետաքրքրել ուսանողը պատճառի ու արդիւնքի բացատ-

բութիւնով : Լուսաբանել դասը յարակից ու ժամանակա-  
կից տեղիքներով : Մարդել աշակերտին սիրտն ու միտքը՝  
մեծ դէմքերու ներշնչած խաչայնորովն ու հրահանգիչ  
կեանքովը : Ամբողջ գաղափարներ կազմել տալ մեծ ազ-  
գերու անցեալ ու ներկայ կեանքի զարգացումին ու կա-  
տարած գերերուն վրայով : Քաղաքակրթութեան առա-  
ջացումը ուրուազծել , պատմական ուսումնասիրութիւններ  
թելադրել : Հայ պատմութիւնը աւանդել նոր հետազոտու-  
թիւններու լուսաբանութեամբ և հայ կեանքի լայն ծա-  
նօթութիւններով :

4 . Աշխարհագրութեան դասը սերտել տալ միշտ աշ-  
խարհացոյցին վրայ , կարևոր անուններ միայն ճանչցնել՝  
պատմական և կամ մասնական տեղիքով մը զուգորդելով ,  
ծանօթութիւններու միացնել ազգերու կրօնի , լեզուի ,  
գրականութեան , ցեղայնութեան , քաղաքական ու անտե-  
սական կեանքի , վաճառականութեան և ճարտարարուեստի  
վերաբերեալ : Քարտխագծութեան վարժեցնել , պտոյտ-  
ներով բնական աշխարհագրական գիտելիքներու հմտացնել :  
Մասնաւոր խնամք տալ հայրենագիտութեան և Օսմ. աշ-  
խարհագրութեան , հին ու նոր անուններու և տեղիքներու  
ծանօթացումով :

5 . Գիտական , Բնապատմական եւ Իրագիտական դա-  
սերը տպաւորիչ և հետաքրքրական դարձնել փորձերու և  
տեղական առարկաներու դէմ յանդիման ցուցումներով :  
Աշակերտին մէջ՝ գիտակցօրէն դիտելու և հետաքրքրուելու  
ողին մշակել :

6 . Ուսողութեան դասը գործնական կեանքի հաշիւ-  
ներով և խնդիրներով տալ Օսմ. և օտար գործածական  
չափի , կշիռի , դրամի և հաշիւի ծանօթութիւնը , վաճա-  
ռականական հաշիւներուն հետ : Ժողովուրդին հաշուելու  
զանազան կերպերուն ալ ծանօթացնել : Զի մտնաք մտա-  
ւոր և գրաւոր հաշիւի վարժութիւնը միանգամայն :

7. Գեղարուեստական դասերու մէջ (Գծագրութիւն, Գեղագրութիւն և Երաժշտութիւն) աշակերտը աստիճանական ցուցումներով և փորձերով կրթել գրավարժութեան ու գեղագրութեան զանազան տեսակներու վրայ: Օրինակներու և առարկաներու դէմ յանդիմանական մէթոտով գծամարզութեան և գծագրութեան վարժեցնել: Ոգեւորիչ և ճաշակաւոր երգեր (ազգային, եկեղեցական և օտար) սորվեցնել միաձայն և բազմաձայն: Գեղարուեստի այս բոլոր ճիւղերուն մէջ ալ ուսուցիչին ջանքն ըլլալու է որ աշակերտին մէջ մշակէ համաչափութեան և ներդաշնակութեան սկզբունք ու ճաշակ, գեղարուեստի սէր և երկարողի աշխատութիւն:

#### ԺԲ.

Այցելու ԲՆՆԻՅՆԵՐ. — Այցելու քննիչին պաշտօնն է.

1. Ունկնդրել անձամբ յարմար սեպած դասաւանդութեան գաղափար մը կազմելու համար ուսուցման կերպերուն, աշակերտներու զարգացումի աստիճանին, ուսուցիչի և աշակերտի դասարանական յարաբերութեան և կերպերուն մասին:

2. Տեղեկանալ դպրոցի կարգապահական պայմաններուն, կառավարչութեան կազմին և աշակերտներու ննթակայ եղած և իւրացուցած բարեկրթութեան:

3. Աչքէ անցնել վար.քի-բար.քի, ուսուցչական ժողովի, գասացոյց-ժամանակացոյցի և այս կարգի դպրոցական արձանագրութեանց տեսքները հասկնալու թէ անոնք ո՞ր աստիճան կանոնաւոր և նպատակայարմար կերպով կը գործածուին:

4. Քննութեանէ անցընել դպրոցին ներսն ու դուրսը, հասկնալու համար թէ դպրոցին շէնքէ ի՞նչ յարմարութիւն և ինչչա՛փ պակասներ ունի, անհրաժեշտ նորոգումներու ո՞ր աստիճան պէտք կայ:



5. Ուսուցիչներու հետ առանձին կամ հաւաքական տեսակցութիւնով լսցնել անոնց դասի ու կարգադրութեան վերաբերող թելադրութիւններ, ստանալով անոնցմէ լրացուցիչ տեղեկութիւններ և իրենց հետ բերելով անոնց դիտողութիւնները :

6. Այս Գննիչները տեսակցութիւններ պիտի ունենան դպրոցի մատակարար պաշտօնէութեան (Հոգաբարձու, Խնամակալ և Թաղական) հետ տեղեկանալու համար թէ՛ դպրոցի պիւտձէն հաստատուն թէ՛՝ երերուն հասոյթներէ կը բաղկանայ ու ի՞նչպէս կը մատակարարուի ծախքը :

7. Նոյնպէս պիտի լսէ ան այս մարմինին կողմէ՛ դպրոցի ուսուցչութեան և այլնի վերաբերեալ դիտողութիւններն ու տեղեկութիւնները :

8. Այցելու-Գննիչները թելադրող պիտի ըլլան զըզրոցի մատակարար պաշտօնէութեան՝ որպէս զի այս վերջինը դարմանելու ետև ըլլայ հայթայթելով դպրոցական պիտանի առարկաներն ու կահերը, նաև հարկ եղած նորոգութիւնները փութացնէ :

9. Գննիչներ իրենց այս այցելութեան արդիւնքը, մասնաւոր տեղեկագրով մը պիտի ներկայացնեն Խորհուրդիս, իրենց դիտողութիւններն ալ միացնելով, որոնք մեր խորհրդակցութեան և գործի զլիսաւոր ատաղձը պիտի կազմեն ուսուցիչներու գնահատութեան, ինչպէս նաև դպրոցներու մասին յառաջիկային ձեռք առնուելիք բարելոխութիւններու առիթներով (\*):



---

(\*) Ներկայ Յայտագիր-Ծրագիրը բանաւոր պահանջի և օրինաւոր պէտքերու ու դիտողութիւններու ուժովը կրնայ վերաքննուել ամէն չորս տարին անգամ մը :



# ԾՐԱԳԻՐ ՈՒՍՄԱՆ

## ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌՈՒ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ

Խ Ա Ր Բ Ե Ր Դ

Տեղին ու ժամանակներուն ստիպողութեան նայելով գաւառին նայ երկսեռ դպրոցները, երեք աստիճաններու վրայ կը հաստատուին, որոնց համեմատ գիւղերը պիտի պահեն իրենց Մանկապարտէզի (\*) բաժինին նետ մինչև Բարձրագոյն Բ. դասարանը (երկսեռ)։ Իսկ Քաղաքը և Մեղրէ ալ իրենց յարմարութիւններով նոյն դասարանները ունենալով միասին, պիտի մշակեն նաև ուսումնարանական ընթացք մը չորս տարիներու տեւողութեամբ, երկու լրացուցիչ (\*\*) երկուք ալ երկրորդական կրթութեան դասարաններ։

Այս կերպով Քաղաքի և Մէղրէի երկու կեդրոնական ուսումնարանները (արական բաժին) կը պարտադրուին պահել տասներկու, իսկ գիւղայիններն ալ եօթը տարուան շրջան մը իրենց ընթացքը փակելու համար։

(\*) Ուր որ դժուար է ունենալ Մանկապարտէզի բաժինը, աս վերջինին յատկացուած երկու տարին մէկի վերածելով, այս մէկը Տարրականի մաս ընդունիլ։

(\*\*) Ակնարկուած երկու կեդրոններուն աղջկանց դպրոցները կը լրացրնեն ինքզինքնին լրացուցիչ Ա. և Բ. դասարաններով։ Մեր պահանջն է որ տղաքը իրենց ընթացքը 17—18 տարիքնուն մէջ աւարտելու տեսնին, աղջիկներն ալ իրենց տարիքնուն 15—16ին դուրս զան դպրոցէն, տղայ աւարտական մը եմէ ուզէ, կրնայ անցնիլ պետական կամ ու է Բարձրագոյն դպրոց մը։

## Մ Ա Ն Կ Ա Պ Ա Ր Տ Է Ձ

### Ա. ԵԼ Ք. ՏԱՐԻ

Մանկապարտէզի երկու տարիները՝ խաղ, խնդում, երգ ու կայտուանք միայն: Երկրորդական ասիւնանոյ մը ֆրոպէլեան խաղալիքներու վրայ վարժութիւն: Մանկապարտիզպանուհիին առաջնորդութեամբ, միշտ բնութեան մէջ, միշտ պտոյտ ու մարզանքներ:

Երրորդ ասիւնանոյ մը, նոյն ձեւ ու շարժերուն համընթաց փոքձեր գիր ու թուանշան ճանչնալու վարժութիւն:

## Տ Ա Ր Ր Ա Կ Ա Ն Դ Ա Ս Ը Ն Թ Ա Յ Ք

### Ա. ԵԼ Ք. ՏԱՐԻ

1. Հայերէն
2. Պասմուաճֆ
2. Թուաբանութիւն
4. Իրագիտութիւն
5. Գիր, Երգ, Կծագրութիւն և խաղ

### Ա. Տ Ա Ր Ի

Հայերէն. — Բիչ մը աւելի լայն շարունակումը Մանկապարտէզի վերջին տարիի աւանդուածներուն, եթէ կարելի է այս առաջին շրջանին ալ առանց դասադիրքի: Ուսուցիչը սեւ պատին երեսը տպագիր գիրերու ձեւերը շինէ ու առնց վրայ կատարել տայ փոքրիկներուն հեզելու վարժութիւնը բառերու բնական առգանութիւնով (Դասադիրք՝ Պատրիարքարանի հրատարակութիւն «Մայրենի շեզու») Մանկապարտէզ Ա. Տարի):

Պասմուաճֆ. — Խօսիլ մանուկներուն հասկնալի լեզուով հայ և օտար պատմութիւններէ ընտրողութեամբ վեր առնուած դէպքերու ու դէմքերու վրայ: Բացատրու-

Թիւնը զուարճալի, մանկունակ ու թեղադրիչ (ուսուցիչը դասաւանդութեան պահուն վարանքներու չի հանդիպելու համար, իր ձեռքին տակ ունենայու է պատմական գիրքերու կարեւոր շարքեր մը, որոնցմէ յարմար կտորները իր յուշատետրին մէջ արտագրել ու սերտելէ վերջը կը փորձէ դասախօսել) :

Թուաբանութիւն. — Թիւ գրել ու կարդալ: Նախապէս փոքր թիւերով մտաւոր հաշիւներ ու հետզհետէ տասնաւոր թիւերու վրայ չորս գործողութեան վարժութիւն, առանց գասագիրքի ու առարկաներու միջոցով:

Իրագիտութիւն. — Տուն, այգի, պարտէզ, ընտանի կենդանիներ և այլն կահ կարասիներու տեսալներուն հետ գեղի ու քաղքի մարդուն արհեստները, սնունդը և հագուստ կապուստի պէսպիսութիւնները: Ընտանեկան յարկերու ներքին կազմն ու երեւոյթները (Այս առարկան ալ շահեկանօրէն աւանդելու համար, ուսուցիչը նախապէս ինք պատրաստելու է իր ուղղութիւնը ձեռագրուած տետրակներով) :

Գեղարուեստական ուսմունք. — Գործածութիւն քարտախտակի, քարեգրիչի: Ուսուցիչին կողմէ խնամքով պատրաստուած գիրերու պարզ օրինակներու վրայ կատարել աստիճանական վարժութիւններ:

Երգ. — Մանկական սովորական երգերէն զատ չանտեսել նաև տեղական մաքուր ու ընատոհմիկ երգերու ու եղանակներու վարժութիւնը հետեւելով միշտ պարզէն բաղադրելի դրութեան:

Գծամարզութիւն. — Մ. Ուղուրլեանի հետեւողութիւնով (\*):

---

(\*) Հայ դպրոցներու մէջ այսուհետև մանաւանդ շատ կարեւոր տեղ պէտք է բռնէ դրամենական գծագրութիւնը բոլոր դասարաններու համար: Այս գեղարուեստէն չի նսակցող ուսուցիչը մեծ պակաս մը ենթադրել կուտայ իր կարողութիւնը յատկանշող առաւելումեանց շարքին մէջ:



Խաղ, Մարմնամարզ. — Դուրսը, բացօդին, ուսուցիչներու մէկուն հսկողութեան տակ, ու յաճախ բուն իսկ ուսուցիչին ցուցումներով ըլլալու է :

### Բ. Տ Ա Ր Ի

Հայերէն. — Ընթերցումը բնական շեշտով և առողջանութեամբ: Բառի ու իմաստի բացատրութիւն մանուկ մտքի տարողութիւնով: Դասազիրքէն՝ մերթ նաև գուրմէն գոց ընել տալ պզտիկ հատուածներ: Դասարանին մէջ մաքուր հայերէնով խօսելավարժութիւն, բայց ոչ հիանք գրաւող հոնտորիկ ձևերով (գասազիրք՝ Պատրիարքարանի Մայրենի շէգոռ, Մանկապարտեզ Բ. Տարի):

Պատմութեամբ. — Ծար. բատ առաջնոյն և նոյն ազգիւրներով այլ երբեմն հէքեաթունակ հրաշայիլին մէջ բերումներով՝ պատմել պարզօրէն, ծնողասիրութեան, հայրենասիրութեան, անյիշաչարութեան և ճշմարտախօսութեան վրայ առանց վարդապետական ճոռոմ շատարանութեան:

Թուաբանութիւն. — Գրաւոր վարժութիւն հարիւրաւոր թիւերու վրայ, տրուած թիւերով չորս գործողութիւն աւելի լայն առումով և գրաւոր պարզ խնդիրներ: Այս միւսնոյն աստիճաններով վարժութիւն մտաւոր հաշտողութեան ալ:

Իրագիտութիւն. — Բնասպատմական և բնագիտական պարզ ծանօթութիւններ, տեղական բոյսեր, պտուղներ, թռչունի և չորքոտանի տեսակներ իրենց անուններով, որքան հնարէ դէմ յանդիման ցուցումով և կամ գունաւոր կաւիճով սեւ պատին վրայ անոնց պատկերները գծելով: Ուսանողին հետաքրքրութիւնը լարուած պահելու համար կարելի պիտի ըլլար խօսիլ երբեմն պզտիկ պատմութիւններ թռչուններու և չորքոտանիներու վրայ: Ասոնց վայրի տեսակները որսալու համար կատարուած այլև-



այլ հնարքներն ալ հետաքրքրող կ'ըլլային (առանց դասագիրքին) :

Գեղարուեստական ուսմունք . — Շար. ըստ առաջնոյն և աւելին՝ փորձեր գծադրութեան՝ սեւ տախտակին կամ պատին վրայ գծուած պարզ օրինակներու հետեւողութիւնով : Երգ , խաղ , զիր , նոյն ընթացքով :

### Մ Ի Զ Ի Ն Դ Ա Ս Ը Ն Թ Ա Յ Ք

#### Ա. ԵՒ Բ. Տարի

1. Հայերէն
2. Կրօն-Բարոյական
3. Թուաբանութիւն
4. Իրագիտութիւն
5. Հայրենագիտութիւն
6. Թուրքերէն (Բ. տարիին մէջ)
7. Գեղարուեստական ուսմունք

#### Ա. Տ Ա Ր Ի

Հայերէն . — Հետեւողութիւն նախընթացին և դասին մէջ հանդիպած ասացուածի ձեւերուն ու թիկիւ ոճերուն բացատրութիւնովը : Շարաթը գէթ մէկ անգամ դասագիրքին արձակ կարճ հատուածներէն մէկը — արդէն կարգացուած — ուսուցիչը արտադրել տալով կ'ընէ իր գիտողութիւնները ներկայացուած արդիւնքին վրայ : (Գասագիրք՝ Ա. Անտոնեանի Տարր. Գանձարանը) :

Կրօն-Բարոյական . — Պատմուածք Հին և Նոր կտակարաններու (Գասագիրք՝ Տարր. Ընթացք Կրօնի ուսման գիրքին Տ. Վարդան քահանայ Ասլանեանի) :

Թուաբանութիւն . — Գալաֆեան Ա. և Բ. տարի կազմութիւն թիւերու : Չորս գործողութիւն ամբողջական թիւերու վրայ և խնդիրներ : Տասնորդական չորս գործողութիւններ (Այս գիրքէն ձգելով միթրական չափերը , հասարակ կոտորակը և երկրաչափական մասը :

Իրագիտութիւն . — Դասագիրք Թէյեանի , Շար . Բնապատմական և Բնագիտական համառօտ ծանօթութիւններու : Մարդկային մարմնի կազմը առողջապահական թեւադրութիւններու : միացումով :

Հայրենագիտութիւն . (\*) — Աշխարհագրական անուններ — Միջավայր , բնական ու արհեստական դիրքեր , երևոյթներ , աղբիւր , առուակ , գետակ , ճամբայ , փողոց , եկեղեցի , վանք , ուխտատեղի իրենց անուններով ու պատմական թեթեւ կարճ ակնարկներով : Ապա երկրորդ աստիճանով մը՝ տեղային բնակչութեան թիւն ու ցեղային բաժանումները , սովորոյթ , լեզու , կրօնք , գեղի ու քաղաքի միջև կատարուած փոխադարձ յարաբերութիւնները :

Գեղարուեստական ուսմունք . — Նոյն ընթացքով :

### Բ. Տ Ա Ր Ի

Հայերէն . — Կարդալ , բացատրել և ուղղագրական փորձեր տրուած ուղղութիւնով : Դասին մէջ հանդիպած գծուար կամ ստորագծուած բառերը գործածել տալ աշակերտին անգամ մըն ալ ուրիշ խօսքերու մէջ նոյն նշանակութեամբ ու տարբեր առումներով (դասագիրք՝ Միջին Գանձարան Ա . Անտոնեանի) : Պարզ շարադրութիւններու վարժութիւն :

Կրօն-Բարոյական . — Պատմուածք Հին Ուխտիէն (գործ Տ . Վարդան Քհնյ . Ապանեանի) :

Թուաբանութիւն . — Շար . Կավաֆեան Ա . և Բ . Տարլի ընթացքին և գործածութիւն նոյնին Գ . և Դ . Գիրքին , ասոր ալ մինչև ամբողջական թուոց վրայ չորս գործողութիւն և խառն խնդիրները :

(\*) Այս խիստ շահեկան դասը գործնական արդիւնքով մը փակելու համար պահանջելի էր որ դէպի գեղն ու քաղաքը՝ ամբողջ դասարանով պտոյտներ կատարուին հոգաբարձութիւններէ տրամադրուած ծախքով մը : Գեղի ուսուցիչը քաղաք և քաղաքինը գեղը տանելով իր աշակերտները :

Իրագիտութիւն . — Գործ Թէյեանի «Նախասարեբ  
Բնապատմական եւ Բնագիտական գիտութեանց»:

Հայրենագիտութիւն . — Նահանգային , Մ . Ազիզ , Կեդ-  
րոն և շրջականեր իրենց ստորաբաժանումներով և տե-  
ղական հանդամանքներու ծանօթութիւնով : Նահանգին  
մէջ փոխադարձօրէն արուած , առնուած , արտածելի և  
ներածելի նիւթեր և վաճառականական գործառնութիւն-  
ներ , և այլն :

Թուրքերէն . — Գիր ճանչնալ , հեզել , կարգալ , գրել  
և թարգմանել (Բերախան-Ընթերցարան՝ Պ . Կարապետեանի):

Գեղարուեստական ուսմունք . — Նոյն ընթացքով :

Մարմնակրթանք . — Խաղերու միջոցաւ :

### ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԳԱՍԸՆԹԱՅՔ

#### Ա. և Բ. Տարի

1. Հայերէն
2. Կրօնագիտութիւն
3. Թուաբանութիւն
4. Բնապատմութիւն (Բ. Տարիին մեջ Գիւղայնագիտութիւն  
եւ Բաղայնագիտական գիտութիւն)
5. Թուրքերէն
6. Անգլիերէն
7. Պատմութիւն
8. Աշխարհագրութիւն
9. Գեղարուեստական ուսմունք

#### Ա. Տ Ա Ր Ի

Հայերէն . — Շար . ընթերցումի աշխարհաբար ընտիր  
հաւաքածոյի մը վրայ , քերականական և գրագիտական  
պարզ ծանօթութիւններ և շարադրութիւն) Ընթերցա-  
նութեան դասագիրք՝ Միջին Թանգարան Հ . Ասատուրի):

Կրօնագիտութիւն . — Պատմուածք Նոր Կտակարանէն ,  
ընթացք «Նոր Ուխտի Կտակարան»ին Ա . Վրդ . ԲՆնյ .  
Ապանեանի :



**Թուարանութիւն.** — Շար. Գալաֆեանի Գ. և Դ. Գիրքին, Տասնորդականներու վրայ գործնական խնդիրներ, համառօտ տեղեկութիւն հասարակ կոտորակներու : Տեղական և օտար չափեր ու կշիռներ : Սկսուածք Ե. և Զ. Գիրքին մինչև հասարակ կոտորակ :

**Բնապատմութիւն.** — Գործ Ենովք Թէյեանի, «Միջին Դասընթացք Նախատարերք Բնապատմական և Բնագիտական գիտութեանց» :

**Թուրքերէն.** — Կարգալ, բացատրել ու կատարել ուղղագրական վարժութիւններ : Քերականական պարզ գիտելիքներու հետ ընկ զրուցատրութիւն հարցումներու միջոցով (Դասագիրք՝ Րեհնիւնայի Գրասարի Ա. Տարի, Պ. Կարապետեանի) :

**Անգլիերէն.** — Գիր ճանչնալ, կարգալ, թարգմանել ծանօթութեամբ բառի և պարզ ոճերու : Ուղղագրական փորձերու աստիճանական կիրարկում (Դասագիրք՝ Փրիմըր և սկսուածք Պերլից Աերոսի Ա. Գիրքին) :

**Պատմութիւն.** — Տոհմային համառօտ սկիզբէն մինչև վերջը, բայց ոչ ցամաք շարքովը դէպքերուն ու թուականներուն, դադար ընկ յաճախ կարեւոր ու թելադրիչ երեւոյթներու վրայ, պատճառի ու արդիւնքի հասկնալի բացատրութիւնով :

**Աշխարհագրութիւն.** — Ասիական և Եւրոպական թուրքիա, մասնաւոր և ընդհանուր քարտիսագծութիւնով : Մտաւոր ճամբորդութիւններ (Դասագիրք՝ Սաչկոնցի) :

**Գեղարուեստական ուսումնք.** — Նոյն ընթացքով : Մարմնակրթանք :

## Բ. Տ Ա Ր Ի

**Հայերէն.** — Շար. աշխարհարար քերականութեան և ընթերցումի, վերլուծութիւն քերականական և գրագիտական : Շարագրութիւն, նամակներ՝ ընտանեկան կեանք ու կացք պատմող, և ուսուցիչէն թելադրութիւնով ընկ



փորձեր գրական պատկերներու, թիթև նկարագրութիւններ: Գրագիտական կանոններ (Ընթերց. դասագիրք՝ Բարձր. ընթացք Թանգարան Հ. Ասատուրի):

Կրօնագիտութիւն.— Հայ եկեղեցի, իր խորհուրդները, հաւատալիքներ, տօներ, ծէսեր և եկեղեցիին նուիրատուութիւնը: Հայ մեծանուն հայրապետները և թարգմանիչներ, երեք տիեզերական ժողովները, համառօտ պատմական զիժերով: Քրիստոնէութեան զլիաւոր բաժանումները: Քրիստոնէական-Բարոյական կրթութիւն և պարտաւորութիւններ (Գրաւոր թելադրութիւններ, օգտուիլ Խաչկոնցի «Միջին Կրօնի Ուսում»)էն: Դասագիրքը դաստուան միայն կրնայ ունենալ այս անունով ուրիշ դասագիրքերու հետ):

Թուաբանութիւն.— Շար. Գալաֆեանի Ե. և Զ. տարիին: Հասարակ կոտորակ և չորս գործողութիւնները, կարողութիւն և արմատ, մէթրական գրութիւն ու կշիռ և համեմատութիւն):

Գիւղատեսչութիւն և սնեսագիտական ծանօթութիւններ.— Օգտուիլ Մ. Մինասեանի գործերէն, երեւմտ պատյաի և գործնական ցուցումներու միջոցով ալ աւանդել այս դասը:

Տարեք Բաղաբացիական գիտութեան.— Դասաւանդութեան համար օգտուելով հանդերձ Դաւթեանի «Նոր Դպրոց» կամ Խաչկոնցի «Իուն Պիտի Ըրշաս» գործերէն, ուսուցիչը ինք պէտք է պատրաստէ իր ուղղութիւնը, աշակերտը ազատ պահելով ու է դասագիրքի գործածութենէ, միայն անոր նօթագրել տալով դասը: Ամիտի տեղեկութիւններ Ազգ. Սահմանադրութեան վրայ(\*):

Թուրքերէն.— Ընթերցում արձակ և ոտանաւոր նյարդ

(\*) Աղջկանց բաժինին մէջ «Տարերք Բաղաբացիական գիտութիւն»ը լրացնել Ա. Շրջանի և Բ. Շրջանին «Առտնին Տնտեսութեան» վերաբերեալ նախնական ծանօթութիւններու աւելի ուժ տալ:

հատուածներու դասադիրքին տուած պայմաններովր : Քե-  
րականական զիտելիքներ , ուղղագրութիւն , թուրք լեզ-  
ուով գրուցատրութեան վարժութիւններ : Փորձ փոխա-  
դարձ թարգմանութեանց և փոքր շարագրութիւններու  
(Դասագիրք Լեռաիճի Ասար Բ. Տարի Մ . Արիկեանի) :

Անգլիերէն . — Ուղիղ առողանութիւնով կարդալ ,  
թարգմանել բերանացի և գրաւոր : Լեզուական կանոններ :  
Ուղղագրութեան և գրուցատրական ընթացք (Դասագիրք՝  
Պէլլից մէթոտի և Գրքի և Ոսկեղէն Բանալի Գ . Պաղ-  
տասարեանի) :

Աւստրիացիութիւն . — Եւրոպա , Ասիա , Ամերիկա  
պատմական ամփոփ ծանօթութիւններու միացումով և  
քարտիսագծութեամբ (դասագիրք՝ Մանիսաճեանի) :

Պատմութիւն . — Համառօտ ակնարկներ 19րդ դարու  
վերջին կէսին պատահած դէպքերուն և հետեւանքներուն  
վրայ — Ազգային և Օսմանեան դէպքերու պատմութիւնը  
միայն — Ազգային Մահմանադրութիւն , Պալքանեան ցե-  
ղերու շարժումները , ապա Համլտեան չրջան և Օսմ .  
Մահմանադրութեան վերահաստատումը : Բ . չրջանով Ա-  
րեւելեան հին ազգեր :

Գեղարուեստական ուսմունք . (\*) — Գիր , գծագրու-  
թիւն և եկեղեցական երաժշտութիւն :

Մարմնամարզ :

(\*) Աղջկանց բաժիններուն մէջ պարզձեւի , կարի և ասեղնագոր-  
ծութեան փորձերն ալ միասին միշտ :

ԾԱՆՕԹ . — Այս դասընթացքով կը վերջանայ առհասարակ բոլոր  
գեղերու երկսեռ դպրոցներու ուսումնական շրջանը : Իրարու մօտ գտնուող  
գեղերը՝ ինչպէս նաև Թաղեր , այն տեսակները մանաւանդ որ բնակչութեան  
սակաւաւորութեան պատճառով չպիտի կրնային այս դասարաններու ամ-  
բողջութիւնը ունենալ , կը պարտադրուին անանկները կամ մնալ և կամ  
պահել միայն շատ շատ մինչև Միջին Բ . Դասարանը , իսկ Բարձրագոյն  
երկու Դասընթացքները աւարտել տալու համար ալ կ'ընտրեն ու կ'ունենան  
յարմար կեդրոն մը մէկէ աւելի ձեռնհաս ուսուցիչներու պաշտօնավարու-  
թիւնով , ու յետոյ այն տղարը որ Բարձրագոյն Ընթացքը յաջողապէս փա-  
կելով դեռ կ'ուզէին աւելին մշակել , կրնան քաղաքի և Մէգիրէի ու է  
մէկ կեդրոնին դիմել , ուր պիտի ընդունուին անոնք առանց քննութեան :

ԼՐԱՅՈՒՑԻՉ ԳՍԱՐՆԹԱՅՔ

Ա. ԵՆ Բ. ՏԱՐԻ

- |     |                         |  |   |                |                  |
|-----|-------------------------|--|---|----------------|------------------|
| 1.  | Հայերէն                 |  |   |                |                  |
| 2.  | Կրօն                    |  |   |                |                  |
| 3.  | Թուրքերէն               |  |   |                |                  |
| 4.  | Անգլիերէն               |  |   |                |                  |
| 5.  | Բնապատմութիւն(*)        | <table border="0"> <tr> <td rowspan="2">}</td> <td>Բուսաբանութիւն</td> </tr> <tr> <td>Կենդանաբանութիւն</td> </tr> </table> | } | Բուսաբանութիւն | Կենդանաբանութիւն |
| }   | Բուսաբանութիւն          |  |   |                |                  |
|     | Կենդանաբանութիւն        |  |   |                |                  |
| 6.  | Ուսողութիւն             | <table border="0"> <tr> <td rowspan="2">}</td> <td>Աշնեպարս</td> </tr> <tr> <td>Տոնարակաչութիւն</td> </tr> </table>        | } | Աշնեպարս       | Տոնարակաչութիւն  |
| }   | Աշնեպարս                |  |   |                |                  |
|     | Տոնարակաչութիւն         |  |   |                |                  |
| 7.  | Աւխարհագրութիւն         |  |   |                |                  |
| 8.  | Գիտութիւն               | <table border="0"> <tr> <td rowspan="2">}</td> <td>Բնագիտութիւն</td> </tr> <tr> <td>Տիեզերագիտութիւն</td> </tr> </table>   | } | Բնագիտութիւն   | Տիեզերագիտութիւն |
| }   | Բնագիտութիւն            |  |   |                |                  |
|     | Տիեզերագիտութիւն        |  |   |                |                  |
| 9.  | Պատմութիւն              |  |   |                |                  |
| 10. | Գեղարուեստական ուսմունք |  |   |                |                  |
| 11. | Մարմնամարզ              |  |   |                |                  |

Ա. Տ Ա Ր Ի

Հայերէն. — Ընթացք աշխարհաբար քերականութեան : Չեռքի դասագիրքէն զատ շարաթը անգամ մըն ալ թերթերու ընթերցում : Գրագիտութեան և շարադրութեան փորձեր արուած ուղղութիւնով (Ընթերցանութեան դասագիրք՝ Ճաշակ Նոր Գրականութեան Ս. Դաւթեանի) :

Կրօն. — Հեթանոսական կրօնքի երեւոյթները (Յուսթապաշտութիւն , բնապաշտութիւն , ոգեպաշտութիւն և շն.) նոյն քայլերով հայ հեթանոսական կրօնք , Մովսիսականութիւն , քրիստոնէական կրօնքի հետ կապ ունեցող մասերով և սկիզբ քրիստոնէական շրջանի :

(\*) Երկու կեդրոններու աղջկանց բաժիններուն մէջ այս առարկաներուն մէկուն կամ միւսին տեղը կամ եթէ կ'ուզուի , անոնց հետ համընթաց պահել ձեւագիտութեան դասը և շարունակել աւելի լայնօրէն Առտնին Տնտեսութիւնը :



Թուրքերէն. — Ընթացիկ կանոններ թուրքերէնի խառն պարսկերէնով և արաբերէնով : Թարգմանութիւն , ուղղագրական և զրուցատրական վարժութիւն : Նախագասութիւններու կազմութիւն , փոքր շարադրութիւններ (Դասագիրք՝ Մուխրասար Նեվեսքեք և Սարժը Օաւսնի՝ Պ. Կարապետեանի) :

Անգլիերէն. — Նոյն , վերինին ընթացքով (Դասագիրք՝ Ոսկեղէն Բանալի և Ճօնսի Սեֆրնիս Բիշոփ) :

Բուսաբանութիւն և Կենդանաբանութիւն. (\*) — Գիտելիքներ տեսակներու և սեռերու վրայ , անոնց գործածութիւնը և օգտակար կամ վնասակար հանգամանքները (Ուսուցիչք օգտուիլ գիտնայ եթէ ոչ այս անունով հրատարակուած Էրոպական դասագիրքերէ , գէթ Թէյեանի գործերէն , լայց առանց գիրք պահանջելու աշակերտէն , միայն նօթագրել տարով) :

Ուսողութիւն. — Շար. և վերջ Գավաֆեանի Ե . և Զ . Տարիին , և Արճէպրայի սկսուածք) :

Աշխարհագրութիւն. — Ընդհանուր վերջնում նախընթացներուն և վերջ Ալիբիկէի և Ուլկիանիայի , մասնական և ընդհանուր քարտիսագծութիւնով (Դասագիրք՝ նոյնին շարունակութիւն) :

Պատմութիւն. (\*\*) — Ազգային , սկիզբէն մինչև Բաղրատունիք : Երկրորդ չըջանով , Յունաց պատմութիւն , քաղաքակրթական երեւոյթներու վրայ համառօտ ակնարկներով :

Գեղարուեստական ուսումնք . — Գեղագրութիւն , գծագրութիւն , ձայնական և գործիական երաժշտութեան վարժութիւն :

Մարմնամարզ :

(\*) Աստղանիշուած առարկաները կ'աւանդուին միայն մէկ շրջանի մէջ :

(\*\*) Ազգկանց համար Ա . շաջանին՝ Հայոց Պատմութիւն , իսկ Բ . շրջանին ամիոփ ժանօթութիւններ Յունաց և Հռոմէացոց վրայ :

**Բ. Տ Ա Ր Ի**

**Հայերէն.** — Շար. մշակութեան աշխարհաբարի, գրական, քերականական և տրամաբանական բովանդակութիւնն գործի նամակներու ուսուցիչէն եղած թեղադրութիւններու համաձայն, գրական գիրքերու և թերթերու վրայ ընթերցումներ (Գասադիրք նոյն և վերջ:

**Արօնագիտութիւն.** — Շար. և ընդհ. քրիստոնէական եկեղեցոյ պատմութեան:

**Թուրքերէն.** — Կանոնաւոր ընթացք քերականութեան, ընթերցում գիրքի և թերթերու: Թարգմանութիւն, գրուցատրութիւն, ուղղագրութիւն և շարագրութիւն:

**Անգլիերէն.** — Վերինին ուղղագրութիւնով, շար. նոյն գասադիրքին և Թհրատ Բիպր:

**Ֆրանսերէն.** — Սկսիլ Անգլիերէնի համար գծուած ուղղութեամբ:

**Բնագիտութիւն.** — Պէզճեան, սկիզբէն մինչև վերջ:

(\*) **Տիեզերագիտ.** — Համառօտ և նօթագրելով միայն:

**Տոմարակալութիւն.**(\*) — Վաճառականական գիտելիքներ:

**Պատրաստութիւն առեւտրական հաշիւներու և թղթակցութեան** (Հայերէն, Թուրքերէն և Անգլիերէն լեզուներով):

**Ուսողութիւն.**(\*\*) — Շար. Ալճէպրայի և վերջ:

**Պատմութիւն.**(\*\*\*) — Բազրատունեաց հարստութենէն մինչև մեր օրերը և պատմութիւն Հոսմայեցոյ (համառօտ):

**Գեղարուեստական ուսումն.** — Շար. նախորդ տարիին:

**Մարմնամարզ:**

(\*) Աղջկանց համար Տոմարակալութեան տեղ՝ Բնախօսութիւն:

(\*\*) Ուսողութեան տեղ քաղաքացիական կրթութիւն:

(\*\*\*) Պատմութիւնը Ա. շրջանին՝ ամիտի և կարևոր տեսութիւններ Միջին դարու գիտաւոր դէպքերուն ու անցքերուն վրայ, իսկ Բ. շրջանին 19րդ դարու և ժամանակակից անցքերու վրայ համառօտ տեղեկութիւններ:

**ԵՄՍԹ.** — Երկու կեդրոններուն՝ Մէզլիքի ու քաղաքի աղջկանց դպրոցները պէտք է ինքզինքին բաւականացնեն այս երկրորդ լրացուցիչով, դուրս ձգելով նշանակուած Երտագական երկու լեզուներուն մէկը կամ միւսը: Իսկ Թուրքերէնի ուսուցումը սկսելու են Բարձրագոյն Ա. դասարանէն և վերջացնելու են լրացուցիչի այս երկրորդ տարիին վախճանը:

ԸՆԹԱՅՔ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ

Ա. ԷՒ Բ. Տարի

- |                              |   |
|------------------------------|---|
| 1. Հայերէն                   | 10. Երկրաչափութիւն ( <i>գործ-<br/>նականացնելով</i> ) [տութիւն |
| 2. Բարոյագիտութիւն, Կրօն     | 11. Քաղաքական Տնտեսագի-                                       |
| 3. Թուրքերէն                 | 12. Մասենագրութիւն  |
| 4. Անգլիերէն                 | 13. Օրէնագիտութիւն  |
| 5. Ֆրանսերէն                 | 14. Հոգեբանութիւն   |
| 6. Պատմութիւն                | 15. Մանկավարժութիւն   |
| 7. Երկրաբանութիւն            | 16. Տրամաբանութիւն  |
| 8. Քաղաքացիական<br>Գիտութիւն | 17. Քիմիաբանութիւն  |
| 9. Գիւղատնտեսութիւն          | 18. Բնախօսութիւն  |

Ա. Տ Ա Ր Ի

Հայերէն. — Գրարար լեզու, խմբագրութիւն զանազան տեսակ գրութիւններու աշխարհաբար լեզուով: Գրական վերլուծումներ քննական հայեացքներով և բազդատական ակնարկներ գրարար ու աշխարհաբարի լեզուական օրէնքներու վրայ:

Բարոյագիտութիւն. — Հետեւողութիւնով՝ Ուղիւր Տըուիք Հայտի:

Թուրքերէն. — Նահվը Օամանի, կանոնաւոր ընթացք քերականութեան, գրագիտական ծանօթութիւն և շարագրութեան փորձեր, նամակ, նկարագրութիւն, և այլն: Ընթերցում, լրագրական հատուածներու ընտրութիւնով:

Անգլիերէն. — Շար. լրացուցիչ Բ.ի ուղղութեան և գրագիտական օրէնքներ, շարագրութիւն, նամակ, նկարագրութիւն, և այլն: Փոխադարձ թարգմանութեան վարժութիւն (*Դասագիրք՝ ձօնսի Ֆորքի Րիշըր*):



ՅՐԱՆԱԵՐԷՆ . — Անգլիերէնի հետեւողութիւնով :

Պատմութիւն . — Միջին դարեր և Օսմ . Պատմութիւն համառօտ :

(\*) Երկաբանութիւն . — Տարրական , տեղին վրայ կարեկիօրէն ծրագրուած պոռոյաներով և գործնական ցուցումներով :

Քաղաքացիական գիտութիւն . — Օսմ . կառավարական դրութեան և կազմին վրայ ընդհանուր տեղեկութիւններ : Համառօտ ակնարկներ օտար պետութեանց կառավարական կազմին վրայով :

Գիւղատնտեսութիւն . — Արդիական պայմաններ , բազմապատմաբ տեղականին հետ , գործնական փորձերու կիրարկում :

Երկրաչափութիւն . — Տեսական և գործնական :

(\*) Քաղաքական Տնտեսութիւն . — Հետեւողութիւնով Jevansի :

Մատենագրութիւն . — Հայ հին և նոր մատենագրութեան կարեւոր դարաշրջաններն ու դուրս եկած գրական գործերը համառօտ պատմաչարով :

## Բ. Տ Ա Ր Ի

Հայերէն-Գրաբար . — Գրաբարէ աշխարհաբար փոխադարձ թարգմանութիւն և քերականական լուծում : Յանպատրաստից բանախօսութեան փորձեր , շարադրիկ լրագրական յօդուածներ , լուրեր և ազգագրական տեղեկութիւններ : Համառօտ ծանօթութիւն Տաղաչափութեան :

Կրօն . — Համառօտ տեղեկութիւններ գլխաւոր կրօններու պատմութեան :

Թուրքերէն . — Ընթերցում , փոխադարձ թարգմանութիւն , գրագիտական կանոններ , խմբագրութիւն պաշտօնական և այլն գրութեանց :

Անգլիերէն . — Ընթերցում գրական և լրագրական հասուածներու , փոխադարձ թարգմանութիւն գրաւոր և բերանացի (Դասագիրք Ճօնսի Ֆիլիքսի կամ Պերլիցի Լիթ-րէյըր) վաճառականական նամակագրութիւն և խմբագրութիւն այլ և այլ գրութիւններու :

Ֆրանսերէն . — Անգլիերէնի հետեւողութիւնով :

Պատմութիւն . — Նոր և ժամանակակից , 19րդ դարու վերջին կիսուն դէպքերուն վրայ աւելի լայն ու կարեւոր տեսութիւններով :

Օրէնսգիտութիւն . — Օսմանեան համառօտ :

(\*) Հոգեբանութիւն .

(\*) Մանկավարժութիւն .

(\*) Տրամաբանութիւն .

(\*) Քիմիաբանութիւն .

Ուսուցիչին կողմէն պատ-  
րաստուած տարրական ծա-  
նօթութիւններով :

Բնախօսութիւն . — Կազմախօսական , լնախօսական և առողջապահական ծանօթութիւններ մարդկային մարմինին վրայ : Կարեւոր գիտելիքներ տեղական հիւանդութիւններու մասին :



## ՅԱԻԵԼՈՒԱԾԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Գծամարզութիւն եւ Գծագրութիւն. — Յաջորդարար վարժեցնել գծերու զանազան ձևերուն ծանօթ առարկաներու, բոյսերու, կենդանիներու ձևերուն՝ ստուերագծով կամ կէտաւոր:

Երկրաչափական զանազան գիծերու, բազմակողմերու եւ բազմանկիւններու գծադրութեան վարժեցնել: Նոյնպէս պանի, կոնի, բրգաձևի՝ նոյն առարկաներուն օգնութեամբ, քարետախտակի, սև տախտակի վրայ ծանօթ առարկաներ, գիրքեր, շէնքի տեսարաններ գծել սալ գէմ յանդիմանական եղանակով ու յետոյ օրինակներու միջոցով — նախ անշուք եւ յետոյ շքաւոր թուղթի վրայ — գոյներու համադրութիւն:

Ատիճանական ընդլայնումով ձևքի ճարտարութեան, աչքի ճշտութեան եւ պայծառ յիշողութեան վարժեցնել:

2. Գրավարժութիւն-Գեղագրութիւն. — Նախ սև պատի ու քարետախտակի վրայ պարզ գիրի տեսակներուն վարժեցնել տպագիր ու ձեռագիր: Կարճ բառեր ու կարճ նախադասութիւններ շինել անոնցմով:

Ազնուացնել պարզ գիրը եւ հետզհետէ վարժեցնել (օրինակներու վրայ նախ ու յետոյ յիշողութեամբ) նրբագրի, գլխագրի, բոլորագրի, շեղագրի, երկաթագրի, շքագրի, գոթագրի տեսակներուն՝ իբր պարզ եւ իբր գլխագիր:

3. Երաժշտութիւն. — Պարզ, կարճ ու հաճելի եղանակով մանկական երգեր: Ազգային, աշխարհիկ եւ եկեղեցական ընտրուած երգեր, խմբովին կամ առանձին՝ ունկնդրութեամբ նօթայի սկզբունքներ, երկաձայն կղանակներ նոյն տեսակ ձայնադրութեամբ սորվեցնել:

Մեղմ, ներդաշնակ եւ միաբերան երգելու վարժեցնել:



4. Մարմնամարզ . — Տղայոց տարիքն ու կարգը աչքի առջև ունենալով զանոնք առաջնորդել մանկական և եղանակային ընթացիկ խաղերու միջոցով՝ բազուկի , սրունքի , իրանի , գլուխի շարժումներուն մէջնոտաւոր և կանոնաւոր :

Դէպ ի ետ ու առաջ , վեր ու կողմնական ցատկելու , վազելու , ոտոտակելու վարժեցնել : Առանձինն , միատեղ , զոյգ զոյգ և կարգով քալելու և վազելու վարժեցնել : Տեղական խաղեր , պարեր , չուեր կատարել՝ քայլերգներով ու երգերով՝ եթէ հնար է :

5. — Աղջկանց գծագրութեան ընթացքին կցել ձև , կար , ձեռագործ ու ասեղնանկար , հետեւեալ գիծերով՝ բաժնուած իւրաքանչիւր դասարանի ընդունակութեան համաձայն .

Անկիւն ծալել , կանոնաւոր ու անկանոն իլմիշներ . շուրջ և ծաղիկ . թակալ . քոռ թակալ . կէս թակալ . կորթ կարել . կար ժողվել . քառակուսի խծակ , անկիւն դարձնել . փոթ ժողվել . փոթ ժողվել ու կամարի մէջ առնել . գոգնոց շուրջ , կոր կարել և փոթ ժողվել . փէշի ծայր և փորուած տեղերը կտոր դնել . քոօչէով (թէքճաղ) շինուած օրինակներ (օյա) . ճարմանդ և փուլ կարել . փուլի և ճարմանքի իլիկներ բանալ . միսօ ձևել և կարել . փոթ դնել՝ իրր զարդ . քրօչէով կլորի օրինակներ . փոթ դնել՝ պզտիկ ֆիստանի . փարուիլայի փոթ դնել . պասթա կարել՝ խասայով . խորմա՝ պասթայի տարբեր ձև . շրջաղեհատ ձևել ու կարել , ողջնձև ընել սովրեցնել . կտորի վրայ նախշել (ասղանկար) . իրր զարդ օձիքի տեսակներ՝ այլ և այլ ձևերով . կտորներու կցումով տոպրակ , ծրարոց կարել՝ վրան զոյգ ասեղ , խազ ասեղ երթալ . բջիջաձև փոթ իրր զարդ՝ կուրծքի , թիւի , ևայլնի . կանիֆայի օրինակներ (բարձիկ , կօշիկ , երես , ևայլն) . գոգնոցի տեսակներ՝ ձևել ու կարել . խծիպ և ձագեր . շապիկի տեսակ-

ներ ձեւել ու կարել . ճազով օյայի օրինակներ՝ կլոր . փոթի ձեւեր . լեցուածք ֆասոնէի , կտաւի , ֆանելայի վրայ . մաքոք օյայի օրինակներ . բանուած գրեր վանա-վայի , թաշկինակի , և սյնի վրայ . շապիկի վերի մաս՝ քրօչէով շինուած . քառակուսի օյա աւելի մեծցուելու է . կարկտել գիծը գծին , ծաղիկը ծաղիկին . շեղ կտորներ կարել գծերը իրարու բերելով . կարի մէջ անցուած թելով ֆիթիլ դնել , կարել . թէլքաչի օրինակներ , շապկընկեր ձեւել կարել . գիշերանոց ձեւել կարել . ասեղով օյայի օրի-նակներ . ֆիլա ճազով և ասեղով ծածկոցներ շինել՝ սե-ղանի , մահճակալի , և այլնի . Ուրֆայի գործ . ֆօրկէթով խրլի օրինակներ՝ ուսնոց և գլուխի ծածկոց . լաթի վրայ սլատկեր , թել առջեւը կուլթով նաչխուած . ֆանելայի վրայ մետաքսով նաչխ . ճազով փէշ . խողայով գործ . քթանի վրայ նաչխ . Մալաթիայի գործ . բուրունճիկի օրի-նակ . վերէն վար , վարէն վեր կցուածքով գուլպաներ . խաւաքարտի վրայ շինուած կլոր օյաներ զարդի համար . շալերու բանուածքներ . քէրկէֆով գործ . սնդուսի վրայ նաչխ . գիրէֆէ՛ (չիթի բոլոր) . հլունով գործ՝ շղթայ , քսակ , գօտի . մէկ և հինգ մատէն ձեռնոցներ . էրիկ մար-դու շապիկ , եախայ , գրավաթ , թեւնոց . սլոտիկներու չաքէթի տեսակներ . սլոտիկներու գլխարկի ու գուլպայի տեսակներ , ասոնք ընդհանրապէս նիփէկիով . թաշկինակ՝ թելքաչ , ասեղով օյա , մետաքսով բանուած . քօրսաճ . ձեւեր (գործածական հագուստներու) . զանկապան (թօզ-լուղ) . ֆիաթոյի բանուածք . խասայի վրայ քրօչէով բան-ուածք . թոյլ օյա . անեւաթօ , մետաքս կամ՝ որ և է կտորի վրայ մետաքսով նաչխն՝ ասեղով . մեքենայով կար կարել . քառօ . սլոտիկներու՝ կրծիկ-քօրսաճ . սլոտիկներու շապիկ քօրսաճ :

Գործնականօրէն վարժեցնել կարեւոր կերակուրներու և խմորեղէններու պատրաստութեան , գօլայ գարնելու :

6. Մանչերու ձեռական աշխատութիւն . — Իրագիտութեան և բնապատմութեան դասերու միջոցով աշակերտները մղել ձեռական աշխատութիւններու : Պղտիկները վարժեցնել թուղթէ, խաւաքարտէ և փայտէ խաղալիքներու շինութեան, սնտուկ, ճնճղուկ, տերև, ծալուածներ, կենդանիներու շրջագիծեր, տերեւներու, պտուղներու ձեւածոյներ, մեղրամոմով կենդանակերպներ : Աւելի մեծերը կաւեղէն պտուկներ, կափարիչներ, դիմագիծեր, կենդանակերպներ : Փայտի վրայ սրածայր գործիքներով յօրինել ծաղիկներ, զարդանկարներ, գիրեր, գործիքներու նմոյշներ :

Քաջալերել մասնաւոր գնահատականներով՝ որ աշակերտներ իրենց նախասիրած արհեստներուն, ձեռակերտներուն հետամտին և յօրինեն, ինչպէս՝ ոսկերիչի, փորագրիչի, երկաթագործի, դերձակի, կօշկակարի և այլն արհեստական առարկաներ :

## ՈՒՐԻՇ ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ ՄԸ

1. — Տարիին մէջ շարաթական մէկ դաս պիտի յատկացուի աւարտական կարգի աշակերտներու, որ՝ թուրքերէնով աշխարհագրական, ուսողական, գիտական և պատմական ճիւղերու յատուկ բառերու բացատրութեան փորձերու վարժութիւն :

2. — Օսմ. Պատմութեան, Օրէնադիտութեան և Քաղ. կրթութեան յատուկ դասերը թուրքերէնով պիտի աւանդուին լրացուցիչ և երկրորդական տարիներու մէջ :

3. — Գրավարժութեան ու գեղագրութեան, գծագրութեան ու գծամարզութեան, երաժշտութեան, ձևկարի, ձեռագործութեան և մարմնամարզի դասերը պէտք է աւանդուին մասնաւոր դասընթացքի համաձայն՝ ամէն կարգի յատուկ բաժանումով :



4. — Շարաթական մէկ սրահական դասախօսութիւնով (մասնաւոր անձերու և ուսուցիչներու կողմէն) աշակերտներու անհատական առաքինութեան, ընկերական, ընտանեկան, ազգային և քաղաքացիական յարաբերութիւններ ու պարտականութիւններ ձանչցնել :

5. — Շարաթ օրը արական բաժնի աշակերտներու վերջին պահերը յատկացնել մէկ դաս լիճարանութեան և մէկ դաս հրապարակախօսութեան շարաթ ընդ մէջ :

6. — Գեղարուեստի դասերը վերջին պահերուն ձգելու է : Շարաթական երկուական դաս բաւականաչափ սեպելով :

Ի դիմաց Խարբերդի Գաւ. Վարչութեան  
Ուսումն. Խորհրդոյ

Նախագահ

Առաջ. Տեղ. Խարբերդի

Գ. Մ. ՎՐԴ. ԱՍԼԱՆԵԱՆ

Վ. ԱՏԵՆԱՊԵՐԻ

ԽՈՍՐՈՎ ԹԷՄՊԷՔԻՃԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ

Յ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

(ԹՂԿԱՏ.)

ԿՆԻՔ

Ուսումն. Խորհրդոյ









2015

